ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՍՏ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»

1500-ամյա կենսագրություն ունեցող հայ պատմագիտության անդաստանում իր ուրույն տեղն ունի պատմիչ Փավստոս Բուզանդը: Նրա «Հայոց պատմությունը», որ վերաբերում է IV դարի Արշակունյաց Հայաստանին, բազմակողմանի վերլուծության և քննության է ենթարկվել մի շարք ուսումնասիրողների կողմից[1]: Բուզանդի երկասիրությունը, որ հայտնի է նաև «Բուզանդարան պատմություն» անվամբ, հարուստ նյութ է պարունակում ոչ միայն այն ժամանակի միջազգային հարաբերությունների կապակցությամբ (հատկապես Հայաստանի, Հռոմի և Սասանյան Իրանի միջև), այլև Հայաստանի ներքին կյանքում տիրող բազմապիսի խնդիրների առնչությամբ: Այս առումով առանձնապես ուշադրության է արժանի «սահման» հասկացության մեկնաբանությունը և վերլուծությունը: Իր կամքից անկախ մեր պատմիչն անդրադառնում է նրա դրսևորման մի շարք տարատեսակներին: Ընդհանրապես, երբ խոսվում է սահմանի մասին, ապա ենթագիտակցորեն առաջին հերթին ընկալվում է պետությունների միջև գոյություն ունեցող տարանջատման գիծը, որի հակառակ կողմը պատկանում է ուրիշին: Այսպիսի սահմանի վերաբերյալ բազմիցս խոսում է նաև Բուզանդը, բայց դրանից զատ առկա են նաև մի շարք այլ սահմաններ: Հայաստանի արտաքին (պետական) և ներքին (նահանգ, գավառ, գյուղ...) վարչա-տարածքային սահմաններից բացի, այստեղ առկա են նաև ունեցվածքային, բարոյականության, լեզվի, թվային, իշխանության իրավասությունների և այլ սահմաններ[2]:

Կանգ առնենք վերջինիս՝ իշխանության իրավասությունների սահմանին և պարզաբանենք Բուզանդի մոտեցումներն այս հարցին: Միանգամից պետք է ընդգծել, որ այստեղ նա պատմիչի մոտեցումները միանշանակ չեն, քանզի նա անդրադառնում է պետական (վարչական), զինվորական և հոգևոր (կրոնական) բնագավառներում աշխատող և ծառայող մարդկանց իրավասությունների շրջանակներին:

Նախ կանգ առնենք և թվարկենք այդ քաղաքացիական պաշտոնյաներին՝ թագավոր (արքա, իսկ Հռոմում՝ կայսր), մեծ նախարար, իշխան, բդեշխ, աշխարհատեր նախարար, հազարապետ, մեծ մարդպետ (նա օգտագործում է մեկ անգամ նաև մարդպետության սահման արտահայտությունը), կարճազատ,

մարզպան, մեծամեծ նախարար, ավագ, կուսակալ, աշխարհակալ, ազնվական, դատավոր, պետ, գործակալ, մեծ սեպուհ, ռամիկ, շինական, գեղջուկ, ազատ, ստրուկ (ծառա կամ աղախին...): Նույնիսկ տարբերակում գոյություն ունի նույն ընտանիքի ներսում, երբ պատմիչն իրարից զանազանում է երեխաներին՝ նրանցից ավագին անվանելով երեց որդի[3]: Դրանից մի փոքր վերև Բուզանդը խոսում է նաև կրտսերի (Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակեսի) վերաբերյալ: Այն ժամանակներում դա ուներ խիստ կարևոր նշանակություն բազմաթիվ հարցերի կապակցությամբ (ժառանգության, պաշտոնավարման...): Այնուհանդերձ ողջ հին հասարակարգում դա առավել ցցուն արտացոլված էր Չինաստանում, որտեղ հասարակությունը բաժանված էր հետևյալ դասակարգերի՝ վան (արքա), չժուխոու, դաֆու, չի, շուժեն[4]: Եթե վանն ուներ յոթ որդիներ, ապա ավագը փոխարինում էր իրեն, երկրորդն ընդգրկվում էր չժուխոու քաղաքացիների դասի մեջ, իսկ հինգերորդից սկսած դառնում էին շուժեն (հասարակ քաղաքացի):

Հայաստանում այս կապակցությամբ ստեղծված իրավիճակին կրկին փայլուն պատասխանում է Փավստոսը իր «Նորոգելոյ աշխարհին թագաւորութեան Հայոց» գլխում, երբ գրում է. «Եւ այլ յայսմ ազգաց և ի խոնարհ որ գործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին, թող զնահապետս մեծամեծս և զտանուտեարս՝ որք գործակալք միայն էին, *հնն հարեւր* բարձ (ընդգծումը մերն է – Հ.Հ.)՝ որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց, թող զոտնկայս գործակալութեանն սպասու»[5]:

Հին Հայաստանի (հատկապես Արշակունիների շրջանի) դասային այս կառուցվածքի ուսումնասիրությամբ զբաղվել են մի քանի նշանավոր հետազոտողներ, ինչպես օրինակ Հ. Մանանդյանը, Ն. Ադոնցը, Ի. Ջավախովը, Ա.Մ. Կրկյաշարյանը, Ա.Պ. Նովոսելցևը և այլոք[6]: Մեզ հետաքրքրող տեսանկյունից առավել ուշադրության է արժանի Հ. Մանանդյանի ուսումնասիրությունը, որտեղ հեղինակն ընդհանուր վերլուծության է ենթարկում նախարարությունների էությունը, նրանց դասը, ներքին կազմակերպությունը, վասալային համակարգը և գործակալությունները, ազատներն ընդհանրապես և ոստանիկների դերը երկրի ներքին կյանքում: Առավել ընդհանուր բնույթ է կրում «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության երկրորդ հատորում այս հարցերին վերաբերող համապատասխան գլուխը, ուր հեղինակը, ակադ. Ս.Տ. Երեմյանը նշում է. «Արշակունյաց Հայաստանի ողջ ազգաբնակչությունը III-IV դդ. բաժանված էր բարձր և ստորին դասերի: Բարձր դասին էին պատկանում խոշոր և միջին հողատեր ազնվականությունը՝ նախարարները, բարձր հոգևորականությունը, ապա մանր ազնվականությունը՝ ազատները և գյուղական հոգևորականությունը... Ազատների դասը բաղկացած էր երկու հիմնական շերտերից՝ «նախարարներից» և «ազատներից»՝ նեղ իմաստով: Ստորին դասին

էին պատկանում քաղաքացիները՝ առևտրականներն ու արհեստավորները, որոնք համեմատաբար արտոնյալ վիճակում էին և «շինականները»՝ ազատ և կախյալ գյուղացիները, ինչպես նաև քաղաքային պլեբսը՝ ռամիկները»[7]:

Վերոհիշյալ բոլոր ուսումնասիրությունները, չնայած այն հանգամանքին, որ տալիս են շատ ու շատ հարցերի պատասխանները, բայց այսուհանդերձ մնում են խոցելի: Այսպես բաց է մնում մարդպետի, մեծ մարդպետի և մարդպետության սահմանի միջև տարբերությունը: Նույն կերպ առայժմ դժվար է տարբերակել նախարարին՝ մեծամեծ նախարարից, ավագից, կուսակալից, աշխարհակալից, ազնվականից, պետից, գործակալից... Վերցնենք այս շարքից, օրինակ կուսակալին, որը պետք է նշանակի կողմապահ (հին հայերեն կոյս – կողմ, կալնել – փակել բառերից): Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ուներ վերջինս, ի տարբերություն 4 սահմանապահ իշխանների՝ բդեշխների:

Իրավասությունների ուսումնասիրության վիճակն ավելի «անմխիթար» է, երբ խոսք է գնում զինվորական և կրոնական ասպարեզների պաշտոնյա անձանց վերաբերյալ: Զինվորական պաշտոնյաներից Բուզանդը մատնանշում է սպարապետի, զորավարի, հազարապետի, զորագլխի, հայոց սպարապետի և այլոց մասին: Այստեղ բացարձակապես անհասկանալի է մնում բդեշխի դերը, թե ով էր նա՝ զինվորակա՞ն, թե՞ քաղաքացիական անձ: Չի կարող բացառվել, որ նա ուներ միանգամից երկակի դերակատարություն: Այդպիսի իրավունքներ, համեմատության համար նշենք, որ Աքեմենյան Իրանում նախապես ունեին սատրապները (հին պարսկ. խշատրապավանը – նշ. է սահմանի պահապան), մինչև Դարեհ I-ի գահակալությունը: Վերջինս սատրապին իր ռեֆորմներով դարձրեց քաղաքացիական անձ, իսկ վարչա-տարածքային միավորի՝ սատրապության բանակը այսուհետև սկսեց գլխավորել զորավարը, որը ենթարկվում էր անմիջականորեն արքային[8]: Լիովին անհայտ է, թե ինչ ընդհանրություններ և տարբերություններ կային զորագլխի, զորավարի և հազարապետի միջև, ով էր կանգնած ավելի բարձր զինվորական աստիճանացանկում: Նույն կերպ մնում է անհայտ, թե ինչո՞ւ պատմիչը երբեմն մեր սպարապետներին որակելիս օգտագործում է «հայոց» արտահայտությունը, իսկ երբեմն դա բացակայում է: Դա հետևանք է նրա ցանկությա՞ն, թե՞ իրականում եղել է այդպես, և հայոց սպարապետի տիտղոսով անվանվել են ամենաբաջերը և ամենաերևելիները...

Հոգևորականության խնդրի արծարծումն առավել քան ուշագրավ է: Քրիստոնեության ընդունումից արդեն մի փոքր անց, հայկական եկեղեցին հանդես է գալիս որպես լիովին կազմակերպված կառույց և հաստատություն: Դա ավելի ամրապնդվեց Պապի գահակալության տարիներին: Հոգևորականությանը վերաբերող պաշտոններից Բուզանդը նշում է կաթողիկոսի, մեծ եպիսկոպոսի, եպիսկոպոսի, սարկավագի, հայրապետի, երեցի, քորեպիսկոպոսի և այլոց վե-

ռաբերյալ: Հոգևոր կառույցը, ըստ էության, իր աստիճանացանկերով և իրավասությունների տարբերակմամբ ոչնչով չէր տարբերվում զինվորա-քաղաքացիականից, և կարծես թե պատճենավորված էր նրանցից: Այս ամենի մասին Հ. Մանանդյանը գրում է. «...եպիսկոպոսպետը կամ կաթողիկոսը մյուս եպիսկոպոսների հանդեպ ունեցել է նույն դիրքը, ինչ որ թագավորը նախարարական շրջանների իշխանների հանդեպ: Եպիսկոպոսները, ինչպես և նախարարական երկրների իշխանները, անվանվել են «տէր» և համարվել այդ երկրների հոգևոր ներկայացուցիչները»[9]:

Եկեղեցական դասը, որը փոխարինեց հեթանոսականին, կարողացավ շատ արագ վերագտնել իր տեղը և դրա մասին է խոսում նաև այն, որ, եթե նախկինում քրմապետն էր մեծ դատավորը, ապա այժմ այն պատկանում էր կաթողիկոսին (Մեծ դատավարություն գործակալությունը): Սա առավել ևս հետաքրքիր է և ուշագրավ, որ ժողովրդի հոգևոր առաջնորդը զբաղեցնում էր նաև քաղաքացիական կարևորագույն պաշտոններից մեկը: Հոգևոր դասին անդամագրվելն ավելի դժվար էր, քանզի այնտեղ տեղ չունեին նախկինում իրենց արատավորած քաղաքացիները, բայց երևելիների համար չկար ոչ մի սահմանափակում: Դրա լավագույն օրինակ էր Ներսես Մեծի կաթողիկոս ընտրվելը, որը մինչ այդ եղել էր Արշակ II-ի (350-368 թթ.) սենեկապետը, ապա զինվորական:[10] Եկեղեցական դասի ներսում ևս պաշտոնյաների իրավասությունները խիստ զանազանվում էին, բայց այստեղ, մեր կարծիքով, վարչա-հրամայական հարաբերություններն ավելի մեղմ էին, իսկ Հուսիկ կաթողիկոսի նման հանդուգն ղեկավարները՝ եզակի երևույթ[11]: Եթե քաղաքացիական և զինվորական պաշտոնյայից կարելի էր ազատվել շատ հեշտ, ընդամենը մեկ հրամանով, ապա հոգևոր դասը համալրելիս թեկնածուն նախապես ենթարկվում էր մանրամասն զննության:

Այսպիսով, բոլոր այն երևույթները, որոնց մասին մենք խոսեցինք, կապված հին Հայաստանի (Արշակունյաց դարաշրջանի) հետ, բնորոշ էին այդ ժամանակի մյուս բոլոր զարգացած քաղաքակրթություններին: Կառավարման կենտրոնական և ոչ կենտրոնական (տեղային) համակարգերում, փոփոխությունները համակել էին ոչ միայն հին արևելյան զարգացած հասարակարգերը (Եգիպտոս, Միջագետքն ընդհանրապես, Հնդկաստան, Չինաստան), այլև արևմտյան՝ այն է հունա-հռոմեական: Այս ամենի վերաբերյալ գերմանացի նշանավոր հետազոտող Մ. Վեբերը (1864-1920 թթ.) նշում է. «Հնագույն ժամանակաշրջանի միապետությունները, դրանք բյուրոկրատական պետություններ էին (կամ դառնում էին այդպիսին)»[12]: Բյուրոկրատությունը հին հայերենում կոչվում էր դիվանակալություն,[13] և դա տարածվում էր իշխանության թե՛ վերին (կենտրոնական), թե՛ ստորին (տեղային) կառավարման մարմինների վրա: Փաստորեն միակ բացը և առայժմ հանգուցալուծում չստացած խնդիրը, մնում է առավել

հստակորեն բացահայտել, թե ինչ իրավունքներ և պարտականություններ ունեին այդ բազմաթիվ և բազմապիսի մարմիններից յուրաքանչյուրը, որոնց մասին վկայում է Բուզանդը և որոնք էին նրանց լիազորությունների և իրավասությունների սահմանները... Դա ծանրագույն հարց է և այն պետք է որակել մաթեմատիկական լեզվով, որպես հավասարում բազում անհայտներով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բուզանդի և նրա «Հայոց պատմության» վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Ս. Մալխասյանց, Ուսումնասիրութիւն Փաւստոս Բիւզանդի Պատմութեան, Վնն., 1896, Հ. Գելցեր, Փաւստոս Բիւզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւն, Վնտ., 1896, Հ. Անդրիկյան, Բիւզանդի Մամիկոնյանները, Վնտ., 1904, Լ.Հ.Բաբայան, Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (V-VIII դարեր), Եր., 1977, Մ. Абегян, История армянской литературы, кн. 1, Ер., 1947, և այլն:
2. Սահման հասկացության կապակցությամբ տե՛ս նաև Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատոր երկ., աշխատ. Գ. Աւետիքեան և ուրիշներ, էջ 687-688, Եր., 1981, Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 566, Եր., 1967:
3. Տե՛ս Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, Գ, գ:
4. Տե՛ս История древнего Востока, под ред. В.И. Кузищина, М., 2005, изд. 3-е, էջ 378-379:
5. Փավստոս, Դ, բ: Այս, ինչպես նաև մյուս բոլոր սկզբնաղբյուրներում նախարարությունների թվաքանակի հետ առնչվող բոլոր խնդիրները, դեռ անցած դարի սկզբին հանգամանորեն քննարկել է նշանավոր պատմաբան Ն. Ադոնցը: Տե՛ս Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, էջ. 2-ե, էջ 236-297 կամ նույնի հայերեն թարգ. էջ 266-330 (Նախարարության քանակական վերլուծությունը գլուխը), Եր., 1987:
6. Հ. Մանանդյան, Երկեր, հ. Դ, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 187-436, Եր., 1981, Ն.Ադոնց, նշվ. աշխ., И.Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении, СПБ, 1905, Ս.Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI- մ.թ. IV դդ.), Եր., 2005, А.П. Новосельцев, Генезис феодализма в странах Закавказья (опыт сравнительно-исторического исследования), М., 1980.
7. Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, խմբ. Ս.Տ. Երեմյանի, էջ 127, Եր. 1984:
8. Տե՛ս История древнего Востока, նշվ. աշխ., էջ 281, М.А. Дандамаев, Политическая история Ахеменидской державы, М., 1985, էջ 99, նույնի՝ Иран при первых Ахеменидах, М., 1963, էջ 118, Р. Фрай, Наследие Ирана, М., 2002, էջ 146, և այլն:
9. Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 285-286:
10. Տե՛ս Փավստոս, Դ, գ:
11. Տե՛ս նույն տեղում, Գ, ժբ, նաև Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները Ա.Բ. Սարգսեանի, Եր., 1991:
12. М. Вебер, Аграрная история древнего мира, М., 2001, էջ 430: Նույն երևույթների կատարման ընթացքը Ռուսաստանում հետազոտվել է Ն.Պ. Պավլով-Սիլվանսկու կողմից: Տե՛ս Н.П. Павлов-Сильванский, Феодализм в России, М., 1988 ստվարածավալ մենագրությունը:
13. Տե՛ս Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 125, ինչպես նաև Словарь иностранных слов, под ред. А. Г. Спиркина и др., М., 1987, изд. 14-ое (бюрократизм և бюрократия հոդվածները), էջ 93-94: